

SOME ԵՎ ANY ՂԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իբրև խոսքի մաս՝ դերանուններն առհասարակ սակավաթիվ են, բայց նրանց օգտագործման հաճախականությունը, օրինակ՝ անգլերենում, վկայում է այն մասին, որ դրանք կարևոր դեր են խաղում տվյալ լեզվի համակարգում, և պատահական չէ, որ դրանց նկատմամբ հետաքրքրությունը մեծ է թե՛ տեսական, թե՛ գործնական տեսակետից: Սա առաջին հերթին վերաբերում է անգլերենի անորոշ դերանուններին, որոնց տեսական մեկնաբանման առումով բոլոր հարցերը չէ, որ լուծված են, իսկ գործնական առումով եզրահանգումները հաճախ հակասական են և ոչ բավարար չափով հիմնավորված:

Դիտարկենք մի մասնավոր դեպք՝ some և any (և նրանց բաղադրյալ ձևերի) անորոշ դերանունների օգտագործումը պայմանի պարագա երկարադական նախադասություններում: Some և any դերանունները անգլերենում ամենահաճախակի գործածվողներից են, որոնց հետ լեզուն սովորողը ծանոթանում է լեզվի ուսումնասիրության նախնական փուլում: Ընդամիս, այս դերանունների օգտագործման առաջարկները, որոնք տրվում են անգլերենի գործնական քերականությանը վերաբերվող դասագրքերում, որոշ դեպքերում չեն համապատասխանում լեզվական իրականությանը: Սա մասամբ վերաբերում է պայմանական նախադասություններին:

Որոշ քերականներ կարծում են, որ պայմանական նախադասություններում օգտագործվում է միայն any դերանունը, և բերում են համապատասխան օրինակներ: Նման պնդումը զարմանալի է, քանի որ. ա) գեղարվեստական և գիտական գրականության մեջ հանդիպում են օրինակներ, երբ some դերանունը (և նրա բաղադրյալ ձևերը) օգտագործվում է պայմանական նախադասություններում, բ) այնպիսի հայտնի լեզվաբանների աշխատանքներում, ինչպիսիք են Յեսպերսենը, Կրեյզիկզան, Փոուքսման՝ և այլն, մատնանշվում է some և any դերանունների օգտագործումը տարբեր տեսակի նախադասություններում, այդ թվում նաև some դերանվան օգտագործումը պայմանական նախադասություններում, իսկ Կրեյզիկզան նույնիսկ մեկնաբանում է դրանք: Իհարկե, այս հեղինակները չեն տալիս վիճակագրական տվյալներ, այնպես որ նրանց օրինակները կարելի է համարել որպես բացառություն:

Այլ քերականներ չեն բացառում some դերանվան օգտագործումը պայմանական նախադասություններում՝ նշելով, որ «any դերանունը օգտագործվում է հիմնականում հարցական, պայմանական և ժխտական նախադասություններում»², կամ

¹ St' u O. Jespersen. A modern English grammar. VII Heidelberg. 1931; E. Krusina. A handbook of present day English. Groningen, 1932; H. Poutsma. A grammar of late modern English. Groningen, 1916:

² В. Н. Жигадло, И. П. Иванов, Л. Л. Иофик. Современный английский язык. М., 1956, с. 64.

որ «... any and its compounds... are generally used (in about 68-72 per cent of all cases) in interrogative and negative sentences or in conditional clauses»:

Some և any դերանունների իմաստային վերլուծությունը և վիճակագրական հետազոտությունները կատարվել են ժամանակակից ամերիկյան և անգլիական հեղինակների գեղարվեստական և գիտական ստեղծագործությունների հիման վրա: Ուսումնասիրվել է 13000 էջ գեղարվեստական գրականություն և 5000 էջ գիտական տեքստ: Հաշվարկները ցույց են տվել, որ some խմբի բառերի օգտագործումը գեղարվեստական գրականության մեջ կազմում է 43 %, իսկ any խմբի բառերինը՝ 57 %: Գիտական գրականության մեջ some բառի օգտագործումը նույնիսկ ավելի բարձր է: Այն կազմում է 54 %:

Ինչ վերաբերում է some (և նրա բաղադրյալ ձևերի) օգտագործմանը մախադասության մեջ, ապա օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ some խմբի բառերը օգտագործվում են.

1. պայմանի պարագա երկրորդական մախադասություններում տարբեր շաղկապներից հետո՝ if, in case, provided, unless. "If you want to do something for me, you can get me some milk", he said at last. (Maugham, 102); A chemist may be quite satisfied if he gets some new substance in a twentieth of the amount which is theoretically possible (Haldane, 221); "Go ahead, but just tell me where you're going in case something happens so I can get in touch with you (Lewis, 613); One asks at once what descending pathways are responsible for the continuous excitation essential to prevent the onset of spinal shock. This can be investigated, provided one can employ some measurable index of spinal shock (Fulton, 152); "Nothing exciting. You have all seen the day's calendar. Unless something breaks, it will be a routine day" (Bishop, 54); Every human being beyond infancy knows the sound system of his language (unless he has some severe physical abnormality) (Falk, 67);

2. պայմանական մախադասություններում անշաղկապ ստորադասության դեպքում՝ If is suggested, how ever, that rhymes might be made to play an even more effective part, were teachers aware of the possibilities they offer and prepared to take some advantage of these (Fraser, 162);

3. Some խմբի բառերը (ինչպես նաև any խմբի բառերը) կարող են ստանձնել մախադասության տարբեր անդամների պաշտոններ՝ ենթակա, որոշիչ և խնդիր (ուղիղ, անուղղակի կամ մախադասվոր), ավելի հազվադեպ՝ պարագա (տեղի, ձևի), և հանդես գալ որպես ստորոգելիական վերադիր:

Նշելով, որ some խմբի բառերը իսկապես օգտագործվում են պայմանական մախադասություններում՝ կատարելով մախադասության տարբեր անդամների պաշտոններ, այժմ փորձենք ցույց տալ, թե ինչու որոշ դեպքերում այս օգտագործումը ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ: Այս առումով պետք է վերլուծել some և any դերանունների (և նրանց բաղադրյալ ձևերի) բառիմաստները, որոնք դրսևորվում են պայմանական մախադասություններում:

Ինչպես նշում են այն հեղինակները, որոնք զբաղվել են անորոշ դերանուններով (Յեսպերսեն, Կրեյզինգա, Փոուսմա, Ժիգալո, Բարխուդարով, Շտեյլնգ, Խայոնովիչ և այլք), some և any դերանունները արտահայտում են անորոշություն իմաստը՝ անորոշ քանակ և անորոշ հատկանիշ:

³ Б. С. Хаймович, Б. И. Роговская. Теоретическая грамматика английского языка. М., 1967, с. 111.

Պայմանական նախադասություններում some դերանունը, արտահայտելով քանակի անորոշություն, պահպանում է մասնակիության իմաստը (ամբողջի սահմանափակ քանակ), որը հատուկ է այս դերանվանը բոլոր այլ տեսակի նախադասություններում. "It might help a little if you washed some of the dirt out (Hailey D., 2); When the water freezes in a pipe, it bursts it by expanding, particularly if some water is trapped between two blocks of ice (Haldane, 157); Fortunately, we can do more than speculate if we understand something of the evolutionary mechanism, be it of planetary systems or living matter or scientific activity (Price, 4); "If you can learn some lab techniques, so much the better" (Wilson, 31); The idea motivating this is the fact that an optimal solution to a linear programming problem remains optimal if some or all of the constraints are withdrawn (Beale, 155):

Any դերանունը պայմանական նախադասություններում արտահայտում է անորոշ քանակություն առանց հակադրելու միմյանց մասնավորը և ամբողջը: Պայմանական նախադասություններում չի արտացոլվում մակ ամբողջականության իմաստը, որը հատուկ է any դերանվանը պատմողական-հաստատական նախադասություններում, այլ միայն զիջման իմաստը:

"Well, if you are going to get any sleep tonight you'd better get down to the camp", he said (Innes, 103); These are some of the problems which this expedition may at least partially solve. If I know anything of science, it will raise more new questions than it answers all the old ones (Haldane, 137); "But if you find any extra girls in the village, bring them back" (Michener, 378); This means that C is not decreased in value if we increase any non-basic variables, either one at a time or together (Beale, 15).

Հատկանիշի անորոշություն արտահայտելիս some և any դերանունների (և նրանց բաղադրյալ ձևերի) իմաստները մոտենում են: Բայց և այնպես, some խմբի բառերը անորոշ հատկանիշ արտահայտելիս պայմանական նախադասություններում պահպանում են իրենց բառիմաստի անորոշ առանձնահատկությունները՝ սահմանափակում, առանձնացում որոշակի հատկանիշների հիման վրա: Օրինակ՝ "If you were someone who was just willing to get along, that would be different, but you are not" (Wilson, 407); If during the height of this reaction the sciatic or some smaller never on the same side is stimulated the myograph lever drops dead-beat to the original tension of rest, exactly as if the motor nerve had been instantaneously severed (Fulton, 93):

Երբ any խմբի բառերն են արտահայտում անորոշ հատկանիշ, հիմնված այս կամ այն հատկանիշի վրա, ինչ-որ սահմանափակում կամ առանձնացում գոյություն չունի. "If it's of any interest" Coleman said still quietly, "I happen to have had your authority" (Hailey D., 196); "If anyone sees him with it we're all gone" Burke said (Aldridge, 109); Now he was driven outside the law, if he was to find any escape from impossible condition (Pares, 184); If there were any finned animals in the Cambrian they left no clear fossils (Haldane, 144):

Some և any դերանունների իմաստային տարբերությունը հատկապես դսևորվում է, երբ այս դերանունները օգտագործվում են նույն համատեքստում. Arnie was conscious of Holtzer taking deep breaths so that, if anyone happened to be looking, he would appear like someone who needed a little air (Wilson, 510):

Այս նախադասության մեջ հակադրվում են anyone (ով էլ որ լինի, կարևոր չէ՝ ով, այսինքն՝ բացակայում է որևէ ընտրություն) և someone (լինչ-որ մեկը, որը առանձնանում է որոշակի հատկանիշների հիման վրա՝ «Նրանցից մեկը, որը դուրս եկավ մաքուր օդ շնչելու»): Մեկ այլ օրինակ. "Peter, you will lower us with the tractor winch. But if something happens, anything happens, if the ground moves, leave the winch and run back" (Fire, 47): Այստեղ something դերանունը մատնանշում է սահ-

մանափակ անորոշություն՝ ինչ-որ բան մի քանի հնարավոր տարբերակներից, իսկ **anything** դերանունը ընդգծում է անսահմանափակ անորոշություն՝ ինչ էլ որ պատահի, նույնիսկ անենաանհնարինը: Անկասկած, **anything**-ն ընդգծող է (էմֆատիկ):

Ընտրության բացակայությունը any խմբի բառերի մոտ բացակայում է, երբ դրանք օգտագործվում են at all և whatever բառերի հետ.

...if the natural laws of the Universe have any validity at all (Asimov, 23); If he is anyone at all – well, I should be surprised (Christie, 150); and I'd like to say that if you make use of any of it, in any way whatever, you are a lower and dirtier bastard even than I thought you were (Hailey PL, 344):

Մյուս կողմից some խմբի բառերի համար բնութագրական է կիրառումը միևնույն համատեքստում սահմանափակող only մակբայի հետ. «If we only had some place where we could go and be really alone, we'd never talk this way (Wilson, 101); If only I had done something about it when that first report of a transmission came through (Innes, 114); If only we could get some service robots from the factories (Fiction, 39):

Ռ. Լակոֆը՝ գտնում է, որ only-ի հետ կարող է օգտագործվել միայն some դերանունը (և երբեմն any-ն), քանի որ խոսողը մեծան դեպքում միշտ հուսով է կամ ցանկանում է, որ պայմանական մախաղասության երկրորդական մասում ասվածը իրականում տեղի ունենա: Նա ընդհանրապես գտնում է, որ some և any դերանունների ճիշտ օգտագործման համար, բացի դրանց բառիմաստներից, անհրաժեշտ է հաշվի առնել նաև խոսողի վերաբերմունքը ասվածի հանդեպ: Եթե խոսքն ըստ էության դրական է, ապա պետք է օգտագործել some դերանունը. If it's something I can do, Sir, I will (Haily PL, 393); - you make the choice, Selene – I will, if you will tell me something honestly (Asimov, 192):

Եթե խոսողը չի ցանկանում, որ գործողությունը իրականանա, և նրա խոսքը համարվում է սպառնալիք կամ նախազգուշացում, ապա ցանկալի է օգտագործել any դերանունը. There is a cannon aboard the Bay Tree and by the guts of God, if there is any interference with the whaling fleet, I'll blow this house (Michener, 293). If any of these black fellows come after you again, I'll deal with them (Tolkein, 108):

Some դերանունը և նրա բաղադրյալ ձևերը հազվադեպ են օգտագործվում ժխտական մախաղասություններում, այստեղ նույնպես նրանք պահպանում են հաստատական դերանունների իրենց իմաստը, այն դեպքում, երբ any-ն և նրա բաղադրյալ ձևերը ժխտական բառի հետ արտահայտում են ժխտական դերանունների իմաստը (լրիվ ժխտում): Ահա թե ինչու any խմբի բառերի օգտագործումը (some-ի փոխարեն) հետևյալ տեսակի մախաղասություններում կա՛մ աղավաղում է իմաստը, կա՛մ լրիվ բացառում է.

ա) ժխտական ձևով դրված ստորոգյալի դեպքում. «If he doesn't make some arrangements about the garage, I'm going to shut it up and clear out» (Greenwood, 53); If the teacher does not have some written plan, he is likely to forget some of the items he has planned (Olivia, 166); If you don't want something enough to ask for it, you're not entitled to it (O'Hara, 21):

բ) ժխտական շաղկապի դեպքում. «I suppose you're terribly busy, but honestly, Erik, unless I talk to someone. I'll go to pieces» (Wilson, 357); No scientific theory is worth anything unless it enables us to predict something which is actually going on (Haldane, 154):

՝ St'u R. Lakoff. Some reasons why there can't be any "some-any" rule. "Language", 1969, 45, № 3:

Որպես եզրակացություն կարող ենք ասել.

1. Some և any անորոշ դերանուններով օրինակների համեմատումը գիտական և գեղարվեստական գրականության մեջ հաստատում է այն դրույթը, որ տարբեր գործառնական ոճերում նույն նպատակի համար օգտագործվում են արտահայտման միևնույն միջոցները. այն է՝ պայմանական նախադասություններում some և any դերանունները գիտական տեքստերում օգտագործվում են նույն գործառույթներով և արտահայտում են նույն իմաստը, ինչ որ գեղարվեստական գրականության մեջ:

2. Some խմբի բառերի օգտագործումը պայմանական նախադասություններում կազմում է ընդհանուր օրինակների 54% -ը՝ գիտական տեքստում, և 43 % -ը՝ գեղարվեստական գրականության մեջ: Այս տվյալները ժխտում են անգլերենի գործնական քերականության և դասագրքերի հեղինակների այն պնդումը, թե some դերանունը չի օգտագործվում պայմանական նախադասություններում:

3. Այս կամ այն դերանվան օգտագործումը (some կամ any խմբից) հաստատական-պայմանական նախադասություններում ի վերջո կախված է ոչ թե նախադասության տիպից, այլ քննարկվող միավորների բառիմաստներից.

ա) անորոշ քանակ արտահայտելու համար օգտագործվում է some դերանունը, եթե անհրաժեշտ է արտահայտել ամբողջի մի մասը, և any, եթե մասը չի հակադրվում ամբողջին,

բ) անորոշ հատկանիշի արտահայտման դեպքում օգտագործվում են some խմբի բառերը, եթե ենթադրվում է այս հատկանիշի սահմանափակումը, նրա առանձնացումը ինչ-որ հատկանիշների հիման վրա, իսկ any խմբի բառերի օգտագործումը նախընտրելի է այն դեպքում, եթե մեծ սահմանափակումը և առանձնացումը բացակայում են:

4. Ժխտական-պայմանական նախադասություններում some դերանունը (և նրա բաղադրյալ ձևերը) պահպանում են հաստատական դերանունների իմաստը, իսկ any-ն (և նրա բաղադրյալ ձևերը) արտահայտում են ժխտական դերանունների իմաստը (լրիվ ժխտում):

5. Any խմբի դերանունների համար բնութագրական է կիրառումը at all և whatever բառերի հետ, իսկ some դերանվան խմբի բառերի համար պայմանական նախադասություններում կիրառումը պայմանավորված է only սահմանափակող մակբայով:

Г. А. ГЕВОРГЯН - Употребление местоимений some и any в условных предложениях. - В статье рассматривается вопрос употребления неопределенных местоимений some и any (и их производных) в условных придаточных предложениях. Анализ примеров показал, что в условных предложениях some и any в научных текстах употребляются в тех же функциях, как и в художественной литературе. Для выражения неопределенного количества употребляется some, если нет противопоставления части целому, а требуется значение условности. В отрицательных условных предложениях any (и его производные) передают значение отрицательных местоимений (полное отрицание).